

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՂՐՈՂԵՐԻ ԵՎ ՈՒԹԱԲԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2012-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՎ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՂՐՈՂԵՐԻ ԵՎ ՈՒԹԱԲԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ

1. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ լիազոր մարմին) «Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ պետ-հիդրոմետ) կողմից 2012-2014 թթ. ընթացքում կատարման ենթակա՝ պետական նշանակության հիդրոոդերևութաբանական աշխատանքների ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) մշակվել է «Հիդրոոդերևութաբանական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության (այսուհետ՝ ՀՕԿ) կոնվենցիայի, Անկախ պետությունների համագործակցության երկրների (այսուհետ՝ ԱՊՀ) «Հիդրոոդերևութաբանության բնագավառում համագործակցության մասին» և «Անկախ պետությունների համագործակցության միջպետական հիդրոոդերևութաբանական ցանցի մասին» համաձայնագրերի դրույթների հիման վրա:

2. Սույն ծրագրով կանոնակարգվում են լիազոր մարմնի պետհիդրոմետի կողմից 2012-2014 թթ. ընթացքում կատարման ենթակա՝ պետական նշանակության հիդրոոդերևութաբանական աշխատանքները՝ ուղղված հիդրոոդերևութաբանական երևույթների և պրոցեսների դիտարկումների պետական ցանցում իրականացվող մոնիթորինգի ար-

դյունքում ստացվող տեղեկատվությամբ հասարակության, պետական իշխանության մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց պահանջմունքների բավարարմանը՝ գիտակցելով այդ տեղեկատվության կարևորությունը՝

1) վտանգավոր հիդրոոդերևութաբանական պայմաններից, այլ բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներից տնտեսության և բնակչության պաշտպանության.

2) տնտեսական և բնապահպանական բնույթի որոշումների ընդունման.

3) պետության հիդրոոդերևութաբանական անվտանգության ապահովման.

4) եղանակակիրմայական պայմանների, այլ հիդրոոդերևութաբանական և հելիոերկրաֆիզիկական երևույթների համընդգրկուն փոփոխությունների ուսումնասիրման.

5) միջազգային հիդրոոդերևութաբանական ցանցի հետ լիազոր մարմնի պետ-հիդրոմետի գործունեության միասնականացման և այլ հարցերում:

3. Սույն ծրագիրը կազմվել է դիտարկումների ցանցի օբյեկտների գործունեությունը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերի հիման վրա՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 955-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության 2012-2014 թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագրով այդ աշխատանքների համար նախատեսված ֆինանսավորման կողմնորոշիչ չափաբանակներն ու ծավալները: Ծրագրում օգտագործված հիմնական հասկացություններն ունեն նույն իմաստը, որոնք տրված են «Հիդրոոդերևութաբանական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:

II. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

4. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական

ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և այդ կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 1872-Ն որոշման 10-րդ կետի՝ պետհիդրոմետը, որպես պետական հիդրոոդերևութաբանական ծառայություն, ապահովում է Հայաստանի Հանրապետության իշխանության պետական մարմիններին, բնակչությանը, տնտեսության տարբեր ճյուղերին հիդրոոդերևութաբանական փաստացի պայմանների և դրանց սպասվող փոփոխությունների, կլիմայի ներկա և ապագա վիճակի մասին տեղեկատվությամբ՝ անբարենպաստ հիդրոոդերևութաբանական պայմաններից բնակչությանը և տնտեսությունը պաշտպանելու, մարդկանց կյանքին և սեփականությանն սպառնացող վտանգի և հնարավոր վնասի նվազեցման, շրջակա միջավայրի վրա մարդու բացասական ազդեցության կանխարգելման միջոցառումների իրականացման նպատակով:

III. ՕԳԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

5. Հանրապետության տարածքում մթնոլորտում և գետնի մակերևույթին տեղի ունեցող ֆիզիկական երևույթների ուսումնասիրման նպատակով 47 օդերևութաբանական (այդ թվում 6 բարձր լեռնային դժվարամատչելի և 3 մասնագիտացված) կայաններում լրիվ ծրագրով, իսկ 38 հիդրոլոգիական և 2 ագրոոդերևութաբանական դիտակետերում կրճատ ծրագրով (միայն օդի ջերմաստիճանի, տեղումների, մթնոլորտային երևույթների և ձյան բարձրության), Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կողմից սահմանված կարգով և միջազգային ստանդարտներին համապատասխան ժամը 00-ին, 03-ին, 06-ին, 09-ին, 12-ին, 15-ին, 18-ին և 21-ին (Գրինվիչի ժամանակով), իսկ մթնոլորտային երևույթների և եղանակի վիճակի նկատմամբ՝ շուրջօրյա, իրականացվելու են դիտարկումներ հետևյալ օդերևութաբանական տարրերի նկատմամբ՝

Աշխատանքների (տարրերի) անվանումները	Կատարման հաճախականությունը և (կամ) ժամկետը
1. Օդի ջերմաստիճան՝	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ
1) նվազագույն	
2) առավելագույն	
3) ժամկետային	
2. Հողի մակերևույթի ջերմաստիճան՝	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ
1) նվազագույն	
2) առավելագույն	
3) ժամկետային	
3. Հողախորքային ջերմաստիճան՝	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ
1) ըստ ծնկավոր ջերմաչափի	
2) ըստ հողախորքային հանովի ջերմաչափի	
3) ջերմաստիճանի դիտարկումներ 0,2 մ, 0,4 մ, 0,6 մ, 0,8 մ և 1,0 մ խորությունների վրա	
4. Քամի՝	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ
1) ուղղությունը	
2) միջին արագությունը	
3) առավելագույն արագությունը	
5. Տեսանելիություն	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ
6. Անպամածություն՝	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ
1) ամպերի բարձրությունը	
2) ամպերի ձևը	
7. Եղանակի վիճակը՝	շուրջօրյա
1) դիտարկման ժամկետի եղանակը	
2) միջժամկետային եղանակը	
3) մթնոլորտային երևույթներ	
8. Խոնավություն՝	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ
1) հարաբերական	
2) հագեցվածության պակասորդը	
3) պորցիալ ճնշումը	
4) ցողի կետը	
9. Ճնշում	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ
1) կայանի բարձրության վրա	
2) ծովի մակարդակի համապատասխան	
3) բարոմետրական տենդենցի տեսակը	
4) բարոմետրական տենդենցի մեծությունը	
10. Տեղումների քանակը՝	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ
1) ըստ տեղումնաչափի	
2) ըստ անձրևագրիչի	
11. Տեղումների ձևը և տեսակը	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ
12. Գոլորշացում	շուրջօրյա, յուրաքանչյուր 4 ժամը մեկ անգամ
13. Չնածածկույթի՝	
1) բարձրությունը	օրական մեկ անգամ
2) խտությունը	երթողային, յուրաքանչյուր 5 օրը մեկ անգամ
3) ջրի պաշարի որոշումը	երթողային, յուրաքանչյուր 5 օրը մեկ անգամ
4) ծածկվածության աստիճանը	օրական մեկ անգամ

14. Վտանգավոր մթնոլորտային երևույթներ՝	շուրջօրյա
1) տեսակը	
2) սկիզբը	
3) վերջը	օրական մեկ անգամ
15. Սառցակալում՝	
1) տեսակը	
2) չափսերը	

IV. ԱԵՐՈՒՆՔԻ ԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

6. Օրական մեկ անգամ մթնոլորտի ռադիոզոնդարկման իրականացում Գրինվիչի ժամանակով 00 ժամին Երևանի աերոլոգիական կայանում մինչև 30 կմ բարձրության մթնոլորտի տարբեր շերտերի հիմնական օդերևութաբանական պարամետրերի՝ ջերմաստիճանի, խոնավության, ճնշման, քամու ուղղության և արագության ուսումնասիրման նպատակով:

V. ՀԵԼԻՈԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

7. Հելիոերկրաֆիզիկական դիտարկումների ուղղությամբ կատարվելու են՝

1) ակտիումետրիական դիտարկումներ՝ շուրջօրյա դիտարկումների իրականացում 7 կայաններում (Երևան, Տաշիր, Գյումրի, Համբերդ, Մարտունի, Սևան, Որոտանի լեռնանցք) օրվա ցերեկային ժամերին՝ 3 ժամը մեկ անգամ (Գրինվիչի ժամանակով ժամը 06.30, 09.30, 12.30, 15.30, 18.30), գիշերային ժամերին՝ մեկ անգամ (Գրինվիչի ժամանակով ժամը 21.30-ին), արեգակի և երկրի ճառագայթման հաշվեկշռի բաղադրիչների վերաբերյալ՝ ուղիղ ճառագայթման, ցրված ճառագայթման, անդրադարձված ճառագայթման, գումարային ճառագայթման հաշվեկշռի, մակերևույթի ավելոյի:

2) օզոնոմետրիական դիտարկումներ՝ Երևանում (Արաբկիր կայանում) Մ-124 օզոնաչափիչով Գրինվիչի ժամանակով ժամը 07.00-ից մինչև ժամը 10.00-ը պարզ երկնքի դեպքում կատարել օզոնի ընդհանուր պարունակության չափումներ՝ յուրաքանչյուր ժամը մեկ անգամ: Համբերդ կայանում օզոնի ընդհանուր պարունակության չափումները

կատարել օրվա ցերեկային ժամերին, պարզ երկնքի դեպքում 3-5 անգամ, Դոբսոնի սպեկտրոֆոտոմետրով:

VI. ԱԳՐՈՂԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

8. Ագրոօլերնութաբանական դիտարկումներ իրականացնել Երևանի մասնագիտացված ագրոօլերնութաբանական կայանում, օլերնութաբանական ցանցի 40 կայաններում և 2 ագրոօլերնութաբանական դիտակետերում շուրջ 30 գյուղատնտեսական մշակաբույսերի վրա, խոտհարքներում և արոտավայրերում:

Աշխատանքների (տարրերի) անվանումները	Կատարման հաճախականությունը և (կամ) ժամկետը
1. ՎԵԳԵՏԱՑԻՈՆ ՇՐՋԱՆՈՒՄ	
1. Բույսերի զարգացման փուլերի որոշում	2 օրը մեկ անգամ
2. Բույսերի բարձրության որոշում	10 օրը մեկ անգամ
3. Բույսերի խտության որոշում* (1 քառ. մ վրա)	տարին 3-5 անգամ
4. Բույսերի վիճակի և դաշտի մոլախոտային աղտոտվածության որոշում	10 օրը մեկ անգամ
5. Բերքատվության տարրերի որոշում	տարին 3 անգամ
6. Բերքի կառուցվածքի որոշում	տարին 1 անգամ
7. Կանաչ զանգվածի որոշում	10 օրը մեկ անգամ
8. Պտղատուների վիճակի հետազոտություն	1 անգամ գարնանը՝ ծաղկման ժամանակաշրջանում
9. Աշնանացան ցորենի երթուղային հետազոտություններ	գարնանը՝ 1 անգամ
	աշնանը՝ 1 անգամ
10. Հողի վերին շերտերի (0-5 սմ) վիճակի որոշում՝ աչքաչափային մեթոդով	հարակից չոռոզվող տարածքներում, ամեն օր
11. Հողի խոնավության գործիքային որոշում	ամիսը 3 անգամ
12. Հողի խոնավության որոշում 5 մակարդակների վրա, մինչև 1 մ խորությունը, 9 կայաններում	ըստ ստանդարտներով սահմանված ժամկետների
13. Ջերմասեր մշակաբույսերի հողի վարելաշերտի ջերմաստիճանի որոշում	1 ամսվա ընթացքում, 2 օրը մեկ անգամ
14. Հողի կեղևակալվածության որոշում	1 ամսվա ընթացքում, 2 օրը մեկ անգամ
15. Մշակաբույսերի վնասվածության որոշում՝ օլերնութաբանական անբարենպաստ պայմանների, վնասատուների և հիվանդությունների պատճառով	երևույթի առկայության դեպքում
16. Արոտավայրերում խոտածածկի և հողի վերին շերտի պայմանների որոշում	արածեցման սեզոնում, 10 օրը մեկ անգամ
17. Հողի մակերևույթից գոլորշացման որոշում	մայիս-հոկտեմբեր, 6 օրը մեկ անգամ
2. ՈՉ ՎԵԳԵՏԱՑԻՈՆ ՇՐՋԱՆՈՒՄ	
1. Աշնանացան ցորենի և ցանովի խոտաբույսերի կենսունակության որոշում	2 անգամ՝ հունվարին և փետրվարին
2. Պտղատուների ճյուղերի կենսունակության որոշում	-18° C ցածր ջերմաստիճանների

	դեպքում անմիջապես, մարտ ամսին՝ պարտադիր կարգով
3. Աշնանային ցորենի թփակավման հանգույցի որոշում	ձմռան ընթացքում, գույգ օրերին
4. Հողի սառածության և (կամ) հալվածության խորության որոշում	ձմռան ընթացքում, գույգ օրերին
5. Ձյունաչափություն աշնանացանի դաշտերում և պտղատու այգիներում	10 օրը մեկ անգամ՝ ձյան առկայության դեպքում

VII. ՀԻԴՐՈՂՈԳԻԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

9. Հիդրոլոգիական ռեժիմային ուսումնասիրություններ 7 գետավազանային (Քասախ-Սևջուր, Սևան-Հրազդան, Դեբեդ, Ախուրյան, Արփա, Որոտան, Աղստև) հիդրոլոգիական կայանների 86 գետային, 4 ջրամբարային և 4 լճային դիտակետերում:

Աշխատանքների (տարրերի) անվանումները	Կատարման հաճախականությունը և (կամ) ժամկետը
1. Գետերում	
1) ջրի ելքը (ծախսը)	հորդացման շրջանում ամսական 3-4 անգամ, մյուս ամիսներին՝ 1-2 անգամ
2) ջրի մակարդակը	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ
3) ջրի ջերմաստիճանը	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ
4) սառցային երևույթները	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ (երևույթի առկայության դեպքում)
2. Սևանա լճի ջրի ջերմաստիճանը տարբեր խորություններում, ալիքի բարձրությունը, ջրի թափանցելիության սահմանը	առնվազն ամսական 1 անգամ
3. Գոլորշացման դիտարկումներ Սևանա լճի ավազանի 3 օդերևութաբանական կայաններում (Սևան, Մարտունի, Յանրդ)	շուրջօրյա, 4 ժամը մեկ անգամ
4. Սևանա լճի 4 դիտակետերում (Սևան, Շորժա, Կարճաղբյուր, Մարտունի) լճի մակարդակի և ջերմաստիճանի դիտարկումներ	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ
5. Ազատի, Ախուրյանի, Ապարանի և Արփի լճի ջրամբարներում	
1) ջրի ջերմաստիճանը	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ
2) ջրի ծավալը	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ
3) ջրի մակարդակը	հորդացման շրջանում ամսական 3-4 անգամ, մյուս ամիսներին՝ 1-2 անգամ
4) սառցային երևույթները	երևույթի առկայության դեպքում

VIII. ՌԱԴԻՈՂՈԳԻԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

10. Հիդրոօդերևութաբանական ցանցի 34 (այդ թվում 14 հենակետային) կայաններում ռադիոլոգիական իրավիճակի վերաբերյալ ամեն օր, Գրինվիչի ժամանակով ժամը

06.00-ին և 18.00-ին գամնա ֆոնի չափումների իրականացում: Երևանյան լաբորատորիայում մթնոլորտից երկրի մակերևույթի վրա տեղացող ռադիոակտիվ փոշու խտության ամենօրյա չափումներ:

11. Օդերևութաբանական կայաններից բերված հողի նմուշների գումարային բետտա-ակտիվության չափումների իրականացում:

12. Ատոմակայանի շրջակայքից (մասնավորապես, Սևջրից) բերված ջրի նմուշներում կոշտ մնացորդների գումարային բետտա-ակտիվության չափումների իրականացում:

IX. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

13. 2012-2014 թվականների ընթացքում գիտահետազոտական աշխատանքների ուղղությամբ հիմնական խնդիրներն են լինելու՝

1) կազմել Հայաստանի Հանրապետության տարածքի քամու և ճնշման, ամպամածության և մթնոլորտային երևույթների, արեգակնային ճառագայթման, ճառագայթային հաշվեկշռի և արևափայլի կլիմայական տեղեկագրերը.

2) հավաքագրել 2011 թվականի դիտարկումների տվյալները, վերլուծել և ամփոփել Հայաստանի Հանրապետության տարածքի տարեկան կլիմայական նկարագիրը, հաշվետվություն ներկայացնել ՀՕԿ-ի VI տարածաշրջանային ասոցիացիայի տարածաշրջանային կենտրոն և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն (շարունակական).

3) որպես տարածաշրջանային կլիմայական կենտրոն, ստանձնած պարտավորությունների շրջանակներում, իրականացնել Կովկասի տարածաշրջանի կլիմայական մոնիթորինգ (ամսական և սեզոնային ջերմաստիճանների ու տեղումների դիտված քա-

նակների շեղումները (տրմայից), արդյունքները տեղադրել ինտերնետային կայքում (շարունակական)։

4) իրականացնել Հայաստանի տարածքի կլիմայական մոնիթորինգ (ամսական, սեզոնային և տարեկան քարտեզներ՝ միջին ջերմաստիճանները և տեղումների քանակը, դրանց շեղումները (տրմայից), ստացված արտադրանքը տեղադրել ինտերնետային կայքում և տրամադրել Գերմանիայի եղանակի ծառայությանը (DWD)՝ ՀՕԿ-ի Եվրոպայի տարածաշրջանի կլիմայական մոնիթորինգի համակարգի կայքում տեղադրելու համար (շարունակական)։

5) արբանյակային տվյալների հիման վրա կրկնակի ունիվերսալ ծածկագրով (CM-SAF) իրականացնել Հայաստանի տարածքի կլիմայական պայմանների գնահատում ամսական և սեզոնային կտրվածքով (շարունակական)։

6) կիրառել արբանյակային տվյալների շարքերը կլիմայի փոփոխականության գնահատման և այլ ուսումնասիրությունների համար։

7) փորձարկել և ներդնել Հայաստանի Հանրապետության տարածքի օդի ջերմաստիճանի և տեղումների ամսական, սեզոնային և տարեկան կանխատեսման համակարգչային ծրագրային փաթեթը։

8) հավաքագրել և վերլուծել գլոբալ կլիմայական մոդելների արդյունքները Հայաստանի տարածքի համար, ընտրել այն մոդելները, որոնք ավելի ճշգրիտ են վերարտադրում տարածքի կլիման և կիրառել բազմամոդել անսամբլ։

9) փորձարկել և կիրառել Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային գիտակիրառական ինստիտուտի (IRI) կողմից մշակված ամսական-սեզոնային կանխատեսումների կլիմայի կանխատեսման ծրագրային մոդելը (CPT) և գնահատել ստացված արդյունքները՝ ըստ ՀՕԿ-ի համապատասխան մեթոդաբանության։

10) յուրացնել, ներդնել, փորձարկել գլոբալ կլիմայական մոդելների վիճակագրական վերամասշտաբավորման (SDSM) փաթեթը՝ կլիմայի փոփոխության սցենարների մշակման համար.

11) գնահատել Հայաստանի տարածաշրջանում կլիմայական էքստրեմումների (RCLIMDEX) փոփոխությունները, արդյունքները կիրառել տարբեր ոլորտներին սպասարկելու համար.

12) գնահատել Դերբեդ գետի ավազանում մթնոլորտային տեղումների տարածաժամանակային բաշխվածությունը.

13) կատարել Հայաստանի ամբողջ տարածքի մթնոլորտային տեղումների փոփոխության ինտեգրալ գնահատումը.

14) փորձարկել Ախուրյանի ավազանի ջրային ռեսուրսների կանխատեսման մեթոդիկան.

15) գնահատել Հախում, Տավուշ, Խնձորուտ գետավազանների ջրային ռեսուրսները և գետային հոսքերի խոցելիությունը՝ ըստ կլիմայի փոփոխության սցենարների.

16) փորձարկել Սևանա լճի ազատ հոսքի Ողջի, Մեղրի և Ախուրյան գետերի գետային հոսքերի կանխատեսման մեթոդիկաները.

17) մշակել և փորձարկել Սևանա լճից գոլորշացման գնահատման ալգորիթմը.

18) մշակել երաշտների գնահատման համակարգչային փաթեթ.

19) իրականացնել Հայաստանի Հանրապետության տարածքում երաշտային պայմանների սեզոնային մոնիթորինգ, արդյունքները պարբերաբար թողարկել տեղեկագրի տեսքով (շարունակական).

20) ուսումնասիրել Հայաստանում երաշտային պայմանների վրա գլոբալ շրջանառության ազդեցությունը՝ երաշտների կանխատեսման մեթոդաբանության մշակման համար.

21) մշակել և փորձարկել Հայաստանի Հանրապետության տարածքի գյուղատնտեսական տարբեր մշակաբույսերի բերքի կանխատեսման մեթոդիկաները.

22) արբանյակային տեղեկատվության կիրառմամբ՝ մշակել ներգանգվածային երևույթների կանխատեսման մեթոդիկա.

23) մշակել եղանակի կանխատեսման թվային մոդելների համադրությամբ օդերևութաբանական տարրերի կանխատեսման մեթոդ (WRF – HRM) Հայաստանի տարածքի համար:

X. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

14. Կանխատեսումների, տեղեկագրերի, տարեգրերի պատրաստում, ծառայությունների մատուցում և համաշխարհային ու տարածաշրջանային կենտրոններին տեղեկատվության հաղորդման իրականացում համաձայն ՀՕԿ-ի կոնվենցիայով, ԱՊՀ միջպետական համաձայնագրերով, սույն ծրագրով ամրագրված, ինչպես նաև երկկողմ պայմանագրերով ստանձնած պարտավորությունների.

Տեղեկատվության անվանումը	Տեղեկատվության տրամադրման հաճախականությունը և (կամ) կատարման ժամկետը
Եղանակի քարտեզ	ամենօրյա
Հիդրոօդերևութաբանական տեղեկագիր	ամենօրյա
Ամսական եղանակային պայմանների կանխատեսում	յուրաքանչյուր ամիս
Սեզոնային եղանակային պայմանների կանխատեսում	հոկտեմբեր, մարտ
Տեսություններ դիտված եղանակային պայմանների մասին	յուրաքանչյուր ամիս
Տեսություններ դիտված և սպասվող երևույթների մասին	յուրաքանչյուր շաբաթ
Երևան քաղաքում և մարզկենտրոններում միջին օրական ջերմաստիճանների տրամադրում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը	մայիս-հոկտեմբեր
Լիազոր մարմնի ճգնաժամային կառավարման կենտրոնին և ինտերնետ կայքին եղանակի կանխատեսումների և վտանգավոր երևույթների մասին նախագգուշացումների տրամադրում	ըստ կանխատեսման
Հանրային հեռուստատեսության համար 1 օրվա հիդրոօդերևութաբանական կանխատեսում	ամենօրյա
Ազգային ռադիոյի համար եղանակի տեսություն (օրական, շաբաթական կանխատեսումներ)	ամենօրյա, յուրաքանչյուր շաբաթ
Երևան քաղաքի եղանակի կանխատեսում՝ 1 օրվա համար	ամենօրյա
Հանրապետության 10 մարզերի համար հիդրոօդերևութաբանական տեղեկագրերի պատրաստում	ամենօրյա

Հիդրոոդերևութաբանական սպասվելիք կամ դիտված վտանգավոր երևույթների մասին տեղեկատվության պատրաստում	ամենօրյա
Պետական լրատվամիջոցների համար կանխատեսումներ, տեսություններ	ամենօրյա
Աերոսինոպտիկական նյութեր և կանխատեսումներ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ավիացիայի վարչության համար	ամենօրյա
Ուլտրամանուշակագույն ճառագայթման ինտենսիվության և գեոմագնիսական դաշտի վիճակի փոփոխությունների գնահատում և կանխատեսում	ամենօրյա
Հայաստանի Հանրապետության տարածքում տեղաբաշխված Ռուսաստանի Դաշնության զինված ուժերին հիդրոոդերևութաբանական տեղեկատվությամբ և կանխատեսումներով ապահովում	ամենօրյա
Շահագրգիռ կազմակերպություններին և բնակչությանը ահազանգում հիդրոոդերևութաբանական վտանգավոր երևույթների մասին՝ ըստ սահմանված կարգի	ըստ երևույթների առկայության
Երևանի քաղաքապետարանին հիդրոոդերևութաբանական վտանգավոր երևույթների մասին տեղեկատվությամբ և կանխատեսումներով ապահովում	ամենօրյա
Գարնանային վարարումների տարրերի կանխատեսում	մարտ-ապրիլ ամիսներին
Գարնանային վարարումների տարրերի կանխատեսման ճշգրտում	հունիս ամսին
Գետերի ամսական ծախսերի կանխատեսում	ամսական
Գետերի միջին վեգետացիոն ծախսերի կանխատեսում	տարեկան 1 անգամ
Գետերի միջին եռամսյակային ծախսերի կանխատեսում	յուրաքանչյուր եռամսյակ
Գետերի տասնօրյակային ծախսերի կանխատեսում	յուրաքանչյուր տասնօրյակ
Գետերի միջին օրական ծախսերի կանխատեսում	ամեն օր
Ձյան կուտակումների վերաբերյալ տեղեկանք	մարտ ամսին
Սևանա լճի ջրային հաշվեկշիռը	ամսական
Սևանա լճի մակարդակը	ամենօրյա
Գետերի մակարդակի և ծախսի տվյալներ	ամենօրյա
Հրազդան-Հրազդան դիտակետում ջրի մակարդակի (ծախսի) հաճախականացված դիտարկումների տվյալներ	պարբերաբար, ապրիլ-հունիս ամիսներին
Սևանա լճից բաց թողնված քանակի ջրի քանակի վերաբերյալ տվյալները	ամենօրյա, ըստ բացթողումների գրաֆիկի
Սևանա լճի մակարդակի (դեկտեմբերի 31-ի դրությամբ) կանխատեսում	ապրիլ, հունիս, սեպտեմբեր
Դիտված սելավային երևույթների տվյալների մշակում և ԳԻՍ համակարգով քարտեզագրում	մայիս-հոկտեմբեր ամիսներին
Ձնահյուսերի ուսումնասիրություններ	դեկտեմբեր-մայիս ամիսներին
Տեղեկություն ձնահյուսերի առկայության, դրանց հնարավոր անցման տեղի, ժամանակի, հզորության և չափերի մասին	ըստ առկայության
Գետերի հունային դեֆորմացիաների ուսումնասիրություններ	առաջին կիսամյակ
Հայաստանի Հանրապետության գետավազաններում	մարտ ամսին

երթուղային ձյունաչափական աշխատանքներ	
Տեղեկանքներ լեռնային և նախալեռնային տարածաշրջաններում աշնանացան ցորենի ցանքի պայմանների մասին	1-2 անգամ, աշնանը
Տեղեկանքներ աշնանացան ցորենի ձմեռման պայմանների մասին	2 անգամ, փետրվար-մարտ ամիսներին
Աշնանացան ցորենի ձմեռման ընթացքում վնասվածության որոշում ըստ կենսունակության տվյալների	2 անգամ, փետրվար-մարտ ամիսներին
Աշնանացան ցորենի վիճակի կանխատեսումը վեգետացիայի սկզբին	1 անգամ, գարնանը
Աշնանացան ցորենի վեգետացիայի սկզբին լեռնային շրջաններում խոնավության պաշարների կանխատեսումը	1 անգամ, գարնանը
Աշնանացան ցորենի մոմային հասունացման ժամկետների մասին տեղեկանք	1 անգամ, գարուն-ամառ ժամանակահատվածում
Աշնանացան ցորենի հասկակալման ժամկետների կանխատեսումն առանձին տարածաշրջաններում	1 անգամ գարուն-ամառ ժամանակահատվածում
Աշնանացան ցորենի միջին հանրապետական բերքատվության կանխատեսումը հասկակալման ժամանակ	1 անգամ, ամռանը
Հացահատիկային մշակաբույսերի միջին բերքատվության կանխատեսումը`	գարուն - ամառ ժամանակահատվածում
վեգետացիայի վերսկսման ժամանակ	1 անգամ, գարնանը
ցորունակալման ժամանակ	1 անգամ, գարնանը
հասկակալման ժամանակ	1 անգամ, գարուն - ամառ ժամանակահատվածում
Տեղեկանք հովտային շրջաններում վաղահաս կարտոֆիլի ցանքի ժամկետների վերաբերյալ	1 անգամ, փետրվար-մարտ ամիսներին
Կարտոֆիլի միջին հանրապետական բերքատվության կանխատեսումը	1 անգամ, գարնանը
Տեղեկանք ջերմասեր կուլտուրաների ցանքի ժամկետների մասին Արարատյան հովտում և նախալեռնային շրջաններում	1 անգամ, գարնանը
Բանջարանոցային մշակաբույսերի հանրապետական բերքատվության կանխատեսում	1 անգամ, գարուն-ամառ ժամանակահատվածում
Ծիրանի և դեղձի ծաղկման ժամկետների կանխատեսում	1 անգամ, գարնանը
Ծիրանի միջին բերքատվության կանխատեսում	1 անգամ, գարնանը
Արարատյան հովտում խաղողի ծաղկման ժամկետների կանխատեսում	1 անգամ, գարնանը
Խաղողի միջին հանրապետական բերքատվության կանխատեսում	1 անգամ, գարնանը
Լեռնային խոտհարքներում խոտի համախառն բերքատվության կանխատեսում	1 անգամ, գարուն-ամառ ժամանակահատվածում
Գարնանացան գարու բերքատվության կանխատեսումը հանրապետությունում ըստ զարգացման ֆազերի	2-3 անգամ, գարուն - ամառ ժամանակահատվածում
Հողի խոնավության պաշարների կանխատեսումը վեգետացիայի սկսվելուց առաջ` ըստ գոտիների 0-10 սմ, 0-20 սմ, 0-50 սմ հողաշերտերում	1 անգամ, գարնանը
Տասնօրյակային ագրոտեղեկագրեր	յուրաքանչյուր տասնօրյակ
Բույսերի ձմեռային հանգստի շրջանի ագրոտեղեկագրեր քանական տեղեկագիր	ամսական, ձմռան ընթացքում

Հարավային նախալեռնային գոտում աշնանացան ցորենի բերքահավաքի ժամանակ սպասվող ագրոկլիմայական պայմանների մասին տեղեկանք	1 անգամ, ամռանը
Հայաստանի Հանրապետության տարածքի տեղումների և խոնավության կլիմայական տեղեկագրի կազմում	2012 թ.
Հայաստանի Հանրապետության տարածքի քամու և ճնշման կլիմայական տեղեկագրի կազմում	2012 թ. շարունակական
Հայաստանի տարածքի կլիմայական մոնիթորինգի իրականացում (ամսական, սեզոնային և տարեկան քարտեզներ՝ միջին ջերմաստիճանները և տեղումների քանակը, դրանց շեղումները նորմայից)	մշտապես, շարունակական
Արբանյակային տվյալների հիման վրա իրականացնել Հայաստանի տարածքի կլիմայական պայմանների գնահատում	մշտապես, շարունակական
ԱՄՆ-ի Միջազգային գիտակիրառական ինստիտուտի կողմից մշակված ամսական-սեզոնային կանխատեսումների մոդելի կիրառում և ստացված արդյունքների գնահատում	2012-2013 թթ.
Դեբեդ գետի ավազանում մթնոլորտային տեղումների տարածաժամանակային բաշխվածության ուսումնասիրում	2012 թ.
Հայաստանի Հանրապետության տարածքում երաշտային պայմանների մոնիթորինգի իրականացում	2012-2013 թթ.
Հախում, Տավուշ, Խնձորուտ գետավազանների ջրային ռեսուրսները և գետային հոսքերի խոցելիության գնահատում	2012 թ.
Ախուրյանի ավազանի ջրային ռեսուրսների կանխատեսման մեթոդիկայի փորձարկում	2012 թ.
Տարեգրերի և տեղեկագրերի կազմում	մշտապես, շարունակական
ագրոոդերևութաբանական	
հիդրոլոգիական	
ռադիոլոգիական	
Տվյալների բանկի ստեղծում	մշտապես, շարունակական
օդերևութաբանական	
հիդրոլոգիական	
աերոլոգիական	
ակտինոմետրիական	
օզոնոմետրիական	
Տվյալների հաղորդում և փոխանակում	2012-2014 թթ.
Մինօպ (SINOP) ծածկագրով 17 կայանների տվյալների տրամադրում Մոսկվայի տարածաշրջանային կենտրոն՝ համաձայն ԱՊՀ միջպետական համաձայնագրի	ամենօրյա
Կլիմայի ունիվերսալ ծածկագրերով (BUFR, CREX) 4 օդերևութաբանական տվյալների ապահովում տվյալների փոխանակության համաշխարհային կենտրոններ	ամսական
Կլիմայի ունիվերսալ ծածկագրերով (BUFR, CREX) աերոլոգիական տվյալների ապահովում տվյալների համաշխարհային փոխանակության կենտրոններ	ամսական
Դիտված վտանգավոր երևույթների սեզոնային տեղեկագրի տրամադրում Տվյալների համաշխարհային կենտրոն	ապրիլ, նոյեմբեր

Ռադիոգոնդարկման տվյալների հաղորդում ՀՕԿ-ի երեք տարածաշրջանային կենտրոններ	ամենօրյա
Օգոնոմետրիական տվյալների հաղորդում ՀՕԿ-ի Տորոնտոյի (Կանադա) տարածաշրջանային կենտրոն	ամսական
Գամմա ֆոնի շաբաթական տվյալների հաղորդում Ռուսաստանի Դաշնության Օբնինսկ քաղաքի «Թայֆուն» գիտաարտադրական միավորմանը	շաբաթական, ամսական

XI. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

15. Պետհիդրոմետի հետագա կայուն գործունեության ապահովման նոր տեխնոլոգիաների ներդրման և մասնագիտական կադրերի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման նպատակով նախատեսվող միջոցառումներն են՝

1) մասնագետների առեստավորման անցկացում՝ ըստ ժամանակացույցի, որը հաստատում է լիազոր մարմնի ղեկավարը.

2) ոչ մասնագիտական բարձրագույն կրթություն ունեցող աշխատողների համար «Ընդհանուր հիդրոօդերևութաբանության հիմունքները» թեմայով դասընթացների անցկացում.

3) համագործակցություն Երևանի պետական համալսարանի հետ՝ հիդրոօդերևութաբանության մասնագիտությունն ընտրած ուսանողներին աջակցելու, նրանց ուսումնական պրակտիկան կազմակերպելու և մասնագիտական աշխատանքով ապահովելու ուղղությամբ.

4) ԱՊՀ ՀՄԽ-ի հերթական նստաշրջաններին ընդունված որոշումների իրականացում, ինչպես նաև մասնակցություն ԱՊՀ ՀՄԽ-ի 24-րդ, 25-րդ և 26-րդ նստաշրջանների քննարկմանը ներկայացվող նյութերի նախապատրաստման աշխատանքներին.

5) միջոցառումների ձեռնարկում ՀՕԿ-ի տարածաշրջանային ուսումնական կենտրոններում մասնագետների վերապատրաստման ուղղությամբ.

6) պետհիդրոմետի մասնագետների մասնակցության ապահովում թուրքական կողմի մասնագետների հետ համատեղ հիդրոմետրիական աշխատանքների կատար-

մանն Արաքս-Սուրմալու, Ախուրյան- Հայկաձոր և Ախուրյան-Երվանդաշատ ջրաչափական դիտակետերում.

7) միջոցառումների անցկացում նվիրված օդերևութաբանության և ջրի համաշխարհային օրերին.

8) ՀՕԿ-ի և ԱՊՀ հիդրոօդերևութաբանության միջպետական խորհրդի ծրագրերով մասնագետների վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև այլ երկրների ազգային հիդրոօդերևութաբանական ծառայությունների հետ կնքված երկկողմ համաձայնագրերի և պայմանագրերի շրջանակներում անցկացվող կարևորագույն միջոցառումներին մասնակցության ապահովում (այդ թվում հրավիրող կազմակերպության կողմից գործուղման ծախսերի մասնակի կամ ամբողջությամբ փոխհատուցման պայմանով).

NN ը/կ	Վայրը	Միջոցառման անվանումը (սպատակը)	Ժամկետը 2012 թ.	Ժամկետը 2013 թ.	Ժամկետը 2014 թ.
1.	Ռ-Դ, քաղ. Ժելեզնոդորոժնի	ԱՊՀ Հիդրոօդերևութաբանության միջպետական խորհրդի աշխատանքային խմբերի նիստեր	2-րդ եռ.	2-րդ եռ.	2-րդ եռ.
2.	ԱՊՀ երկրներ	ԱՊՀ ՀՄԽ-ի 24-րդ, 25-րդ, 26-րդ նստաշրջաններ	3-րդ եռ. քաղ.Կազան	3-րդ եռ.	3-րդ եռ.
3.	Ռ-Դ, քաղ. Մոսկվա	Լիագոր մարմնի պետհիդրոմետի և ռուսհիդրոմետի երկկողմ համագործակցության քննարկում	ըստ պայմանավորվածության		ըստ պայմանավորվածության
4.	Ռ-Դ, քաղ. Մոսկվա	Մասնակցություն ռուսհիդրոմետի կոլեգիայի ընդլայնված նիստին	փետրվար	փետրվար	փետրվար
5.	Ռ-Դ, քաղ. Սանկտ Պետերբուրգ, քաղ. Օբնինսկ, քաղ. Ժելեզ- նոդորոժնի	Հիդրոօդերևութաբանության բնագավառում մասնագետների վերաորակավորման և վերապատրաստման ուղղությամբ համագործակցության մասին ԱՊՀ միջպետական համաձայնագրի շրջանակներում մասնագետների վերապատրաստում Ռ-Դ-ի ռեգիոնալ ուսուցողական կենտրոններում	ըստ ուսումնական ծրագրերի և ֆինանսական հնարավորության	ըստ ուսումնական ծրագրերի և ֆինանսական հնարավորության	ըստ ուսումնական ծրագրերի և ֆինանսական հնարավորության
6.	Վրաստան, քաղ. Թբիլիսի	Լիագոր մարմնի պետհիդրոմետի և Վրաստանի հիդրոօդերևութաբանական դեպարտամետի միջև երկկողմ համաձայնագրի քննարկում		ըստ պայմանավորվածության	
7.	ՀՕԿ-ի Քարտուղարություն	ՀՕԿ-ի կամավոր համագործակցության ծրագրի շրջանակներում	ըստ պայման-	ըստ պայմանավորվածություն-	ըստ պայման-

		քարտուղարության աջակցությամբ ստացված սարքավորումների աշխատանքային վիճակի մասին հաշվետվություն ներկայացնելը, ընթացիկ ծրագրերի իրականացման ապահովում ռադիոգոնդեր, սարքեր, ծրագրային փաթեթներ և այլ սարքավորումներ հայթայթելու ուղղությամբ աշխատանքների իրականացում	նավորվածությունների և ներկայացնելու ժամկետների	ների և ներկայացնելու ժամկետների	նավորվածությունների և ներկայացնելու ժամկետների
8.	Գերմանիա, քաղ. Դարմստադ	Գերմանիայի եղանակի. ծառայության հետ համագործակցության շրջանակներում արբանյակային տվյալների հիման վրա Հայաստանի տարածքի կլիմայական պայմանների գնահատում ամսական և սեզոնային կտրվածքով, «Գերմանիայում կազմակերպվող արբանյակային տեղեկատվություն» թեմայով սեմինարին մասնակցության ապահովում	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների
9.	Նորվեգիա, քաղ. Օսլո	Նորվեգիայի ջրի և էներգիայի կազմակերպության (NVE) հետ համագործակցության շրջանակներում փոխայցելություններ	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների
10.		Ֆիննական «VAISALA» և ֆրանսիական «SAGIM» ֆիրմաների հետ տեխնիկական հարցերով համագործակցության իրականացում	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների
11.	Իսրայել, քաղ. Երուսաղեմ	ՀՕԿ-ի կրթության ծրագրի շրջանակներում Իսրայելի ռեգիոնալ կենտրոնում մասնագետների վերապատրաստում	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների
12.	Իտալիա, քաղ. Հռոմ	ՄԱԿ-ի բաց տիեզերքի խաղաղ նպատակներով օգտագործման ուղղությամբ հերթական հանդիպում	2012 թ. մարտ		
13.	Հայաստան, քաղ. Երևան	Մասնակցություն օդերևութաբանության, օգոնային շերտի պահպանության և ջրի համաշխարհային օրերին	1 եռ.	1 եռ.	1 եռ.

		նվիրված միջոցառումներին			
14.	Հայաստան, քաղ. Երևան	Հայաստանի օդերևութաբանի և օդերևութաբանության Համաշխարհային օրերին նվիրված միջոցառումների անցկացում	1 եռ.	1 եռ.	1 եռ.
15.	Ըստ կայանալու վայրի	Լիազոր մարմնի պետհիդրոմետի և կլիմայի փոփոխության միջկառավարական փորձագետների խմբի (IPCC) հետ համագործակցության շրջանակներում գիտական աշխատանքների իրականացում, մասնագետների փոխայցելություններ, մասնակցություն աշխատանքային խմբերի հանդիպումներին	տարվա ընթացքում	տարվա ընթացքում	տարվա ընթացքում
16.		ԵՀ/ՊԳԿ պարենային ապահովման տեղեկատվական համակարգի հիման վրա կայացվող որոշումների բարելավման ծրագրի շրջանակներում 1) վիճակագրության ծրագրային փաթեթի ձեռքբերումը. 2) արբանյակային տվյալների ստացումը. 3) ագրոօդերևութաբանական տեղեկագրի բարելավումը. 4) երկրատեղեկատվական համակարգի կիրառման դասընթացներին մասնակցությունը. 5) փորձագետների այցելությունը. 6) մասնագետների վերապատրաստումը. 7) ագրոօդերևութաբանական կանխատեսման մոդելների մշակումն ու ներդնումը.	տարվա ընթացքում, ըստ ծրագրերի և ֆինանսական հնարավորությունների	տարվա ընթացքում, ըստ ծրագրերի և ֆինանսական հնարավորությունների	տարվա ընթացքում, ըստ ծրագրերի և ֆինանսական հնարավորությունների
17.	Հայաստան, քաղ. Երևան	Լիազոր մարմնի պետհիդրոմետի մասնագետների ստեստավորման անցկացում	տարվա ընթացքում	տարվա ընթացքում	տարվա ընթացքում
18.	Հայաստան, քաղ. Երևան	Լիազոր մարմնի պետհիդրոմետի ոչ մասնագիտական կրթություն ունեցող աշխատակիցների համար «Ընդհանուր հիդրոօդերևութաբանության հիմունքները» թեմայով դասընթացների անցկացում	տարվա ընթացքում	տարվա ընթացքում	տարվա ընթացքում
19.	Հայաստան, քաղ. Երևան	Հիդրոօդերևութաբանություն մասնագիտությունն ընտրած ուսանողներին աջակցելու, նրանց ուսումնական պրակտիկական կազմակերպելու ուղղությամբ ԵՊՀ-ի հետ համագործակցության իրականացում	տարվա ընթացքում	տարվա ընթացքում	տարվա ընթացքում
20.	ՌԴ, քաղ. Մանկտ Պետերբուրգ	Հիդրոօդերևութաբանական նմուշային սարքերի ստուգաճշտում և չափաբերում	ըստ ժամկետների	ըստ ժամկետների	ըստ ժամկետների
21.	ՌԴ, քաղ. Կիսլովոդսկ	Նմուշային ակտիվումետրի ըստ ԳԳՕ-ի տարածաշրջանային ստանդարտի	ըստ պայման-		

		հերթական ստուգաբերման իրականացում	նավորվածության և ֆինանսական հնարավորությունների		
22.	Գերմանիա, քաղ. Հռին-պայսենբերգ,	Դոբսոնի սպեկտրոֆոտոմետրի հերթական ստուգաբերում ըստ Դոբսոնի սպեկտրոֆոտոմետրի ստուգաբերման եվրոպական կենտրոնի ծրագրի		ըստ պայմանավորվածության	
23.	«Բազմաբնույթ աղետների վաղ նախագուշացման միասնական տարածաշրջանային համակարգ՝ Ասիայի, Աֆրիկայի տարածաշրջանի համար» (RIMES), քաղ. Բանգկոկ (Թաիլանդ)	Լիագոր մարմնի պետհիդրոմետի և Բազմաբնույթ աղետների վաղ նախագուշացման միասնական տարածաշրջանային համակարգի (RIMES) հետ համագործակցության շրջանակներում փոխայցելություններ, հանդիպումներին համատեղ ծրագրերի իրականացում	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների
24.	Շվեյցարիա, քաղ. Ժնև	Մասնակցություն ՀՕԿ-ի 16-րդ (արտահերթ) կոնգրեսի աշխատանքներին	հոկտեմբեր		
25.	Շվեյցարիա, քաղ. Ժնև	Մասնակցություն ՀՕԿ-ի 6-րդ տարածաշրջանային ասոցիացիայի 16-րդ նստաշրջանի աշխատանքներին		սեպտեմբեր-հոկտեմբեր	
26.	Շվեյցարիա, քաղ. Ժնև	Մասնակցություն կլիմայական սպասարկման համար գլոբալ շրջանակային հիմքի (GFCS) բարձր մակարդակի նպատակային խմբի հանդիպմանը	4-րդ եռամսյակ	տարվա ընթացքում	տարվա ընթացքում
27.	Ըստ կայանալու վայրի	Մասնակցություն ՀՕԿ-ի հիմնական սահմանադրական մարմինների (գործադիր խորհրդի, տարածաշրջանային ասոցիացիաների, տեխնիկական հանձնաժողովների) նստաշրջաններին	տարվա ընթացքում	տարվա ընթացքում	տարվա ընթացքում

XII. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

16. Ծրագրի ֆինանսական ապահովումն իրականացվում է հետևյալ միջոցներից՝

1) պետհիդրոմետի համար յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված պետական աջակցության հաշվին.

2) ձեռնարկատիրական գործունեությունից պետհիդրոմետի ստացած եկամուտների հաշվին.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական աղբյուրներից.

4) միջազգային կազմակերպությունների կողմից հատկացվող ֆինանսական միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ